Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐՏԻ ՄԵԿԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Վիշտն է այսօր համակել ամենքիս հոգիները: Ազգս հայոց սգում է կորուստը իր զոհված զավակների: Նախագահական ընտրապայքարում դրսևորված անհանդուրժողության ոգին հանգեցրեց անկարգությունների, ցավալի և ողբերգական բախումների ու առճակատման: Երբեք չէինք սպասի, որ բնական ողջախոհությունը մեր ժողովրդի պիտի տեղի տար ատելության և թշնամանքի առջև: Այսօր, սիրելիներ, մտահոգ և անհանգիստ է համայն մեր ժողովուրդը՝ վտանգված տեսնելով իր նվիրական արժեքները՝ ազգի միաբանությունը, Հայրենիքի խաղաղությունն ու ապահովությունը:

Ցուցաբերենք ողջամտություն, հեռու մնանք եղբայրատյացության զգացումներից, տագնապը խորացնող քայլերից: Հուզող բոլոր հարցերն ու խնդիրները վճիռների պիտի առաջնորդել խաղաղությամբ, օրինահարգությամբ, երկխոսության ապահով ուղիներով:

Պատմության ու սերունդների առջև պատասխանատու ենք յուրաքանչյուրս: Չլինի, որ անխոհեմ հետագա քայլերով վտանգենք մեր երկրի կայունությունը: Չլինի, որ մթագնած տեսնենք մեր Հայրենիքի նորաբաց արևը: Չմնանք պարտական Աստուծո, մեր հայրերի ու զավակների առջև: Հավատում ենք, որ ապավինությամբ առ Աստված, արիության ոգով, հույսով ու լավատեսությամբ պիտի հաղթահարենք ստեղծված ծանր ու դժվարին իրավիճակը, վերագտնենք մեր կյանքի, մեր Հայրենիքի բարօր ընթացքը:

Աղոթք ենք բարձրացնում երկինք հոգիների համար զոհված մեր զավակների և մխիթարություն հայցում նրանց սգակիր ընտանիքներին և հարազատներին:

Թող Աստված զորակից լինի մեզ: Թող Տերն օրհնի ամենքիս իմաստությամբ և Սուրբ Հոգու առաջնորդությունը պարգևի մեզ՝ հաղթահարելու մեր կյանքի այս ծանր փորձությունը:

3 մարտի 2008 թ.

Ս. Էջմիածին